ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«08» դեկտեմբերի 2025թ.

ՀՐԱՄԱՆ N ԳՆ-1897-Ա
<<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ>> ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիր ատուի անվանում	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	Գնման գինը /ՀՀ դրամ/							
ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-25/106	1	վտանգավոր օբյեկտների փորձաքննության ծառայություններ	360000	<<Տեխնիկական անվտանգություն>> ՍՊԸ	08241289	ք. Երևան, Սեբաստիա փողոց, 23 շենք, 70/1	07.11.2025թ.	«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<բ>> ենթակետ (որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիրը կնքելու իրավունքից)	* Ներկայացվում է ստորև

* Վտանգավոր օբյեկտների փորձաքննության ծառայությունների գնման նպատակով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.10.2025 թվականին հայտարարել է ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-25/106 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 7 որոշմամբ ընտրված մասնակից է հայտարարվել <<Տեխնիկական անվտանգություն>> ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 29.10.2025 թվականին, որով նշված անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:

05.11.2025 թվականին Ընկերությունը Պատվիրատուին ներկայացրել է պայմանագիր ստորագրելուց հրաժարվելու գրություն, որի հետևանքում 07.11.2025 թվականին գումարվել է գնահատող հանձնաժողովի

արտահերթ նիստ: Հանձնաժողովի արտահերթ նիստում ընթացակարգի նոր ընտրված մասնակից է որոշվել <<Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն>> ՍՊԸ-ն, որի հետ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 07.11.2025 թվականին:

<<Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն>> ՍՊԸ-ի հետ սահմանված կարգով 26.11.2025 թվականին կնքվել է թիվ ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-25/106 ծառայությունների գնման պայմանագիրը, որի վերաբերյալ հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակվել է 27.11.2025 թվականին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը վճարել է հայտի ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընթացակարգով հայտի ապահովում նախատեսված չէ և 08.12.2025 թվականի դրությամբ Մասնակիցը հայտի ապահովում չի վճարել Պատվիրատուին:

ՏՆՕՐԵՆԻ Պ/Կ՝ Կ. Է. ԽԱՉԻՅԱՆ